ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Ադամյանը, Ծովինար Ալեքսանյանը, Անի Առաքելյանը, Ֆիրդուս Զաքարյանը, Լարիսա Թունյանը, Հովհաննես Հարությունյանը, Վահե Հարությունյանը, Սամվել Մալխասյանը, Գեվորգ Մանուկյանը, Մկրտիչ Մարտիրոսյանը, Սամվել Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Բաբկեն Բաբայան, Շուշան Խանոյան, Կարեն Քենդրջյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Իլոնա Խաչատուրյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման հաշվետվությունը.

ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի,
բ/ ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի:

Կողմ-10 Դեմ-4 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 225-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3 հավելվածների:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144-Ն/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել օրակարգը հետևյալ քննարկվող հարցերով.
1.Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 8-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 225-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին կիսամյակի կատարման արդյունքների մասին:
4. Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143-Ա/

Լսեցին
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի,18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 12.03.2024 թվականի թիվ 01//01615-2024 գրությունը. ***Արարատ համայնքի ավագանին որոշում է*** '

1.Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 03-078-0133-0006 կադաստրային ծածկագիրը կրող 1,63841 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ դպրոց կառուցելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետից բխող նվիրաբերության պայմանագրի կնքման աշխատանքների կատարումը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 146-Ա/

Ավագանու անդամներ

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Իլոնա Խաչատուրյանը

_____